ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Պ-216[1]-03.07.2019-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի (Համարը՝ՀՕ-139-Ն) օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 1.2 մասով՝ հետևայլ բովանդակությամբ՝

«1.2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը կարող են վիճարկվել դատական կարգով միայն վարչական կարգով բողոքարկվելուց (գանգատարկվելուց) հետո:»:

Հոդված 2.

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետյալ բովանդակությամբ 7-րդ կետով.

«7) սույն օրենսգրքով նախատեսված դեպքում վարչական ակտը չի բողոքարկվել (գանգատարկվել) վերադասության կարգով: »:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

(Պ-216[1]-03.07.2019-ՊԻ-011/0)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.

2. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի (Համարը՝ՀՕ-139-Ն) օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 1.2 մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«1.2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 10-րդ գլխով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը կարող են վիճարկվել դատական կարգով միայն վարչական կարգով բողոքարկվելուց հետո:»:

Հոդված 2.

~~1.~~ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետյալ բովանդակությամբ 7-րդ կետով.

«7) սույն օրենսգրքով նախատեսված դեպքում վարչական ակտը չի բողոքարկվել վերադասության կարգով: »:

Formatte

Հոդված ~~2~~3.

2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (***Պ-216-03.07.2019-ՊԻ-011/1***), ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (***Պ-216[1]-03.07.2019-ՊԻ-011/1***) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

No.	*Առաջարկության հեղինակը*	*Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը*	*Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)*	*Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը*	*Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը*
1.	Հեղինակ Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված, 1-ին մաս	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունը խմբագրել և ներկայացնել հետևյալ բովանդակությամբ. «Սույն օրենսգրքի 123, 123.1, 123.3, 123.4, 123.5 (բացառությամբ ութերորդ, իններորդ, տասնչորսերորդ և տասնհինգերորդ մասերով նախատեսված իրավախախտումների), 123.6-123.7, 124-124.4, 124.6, 125-126, 128, 129.2, 131, 132, 135.2 և 140 հոդվածներով սահմանված վարչական	Ընդունվել է	Ընդունվել է

			իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը կարող են վիճարկվել դատական կարգով միայն վարչական կարգով գանգատարկելուց (բողոքարկվելուց) հետո: »		
2.	Կառավարություն	Նախագիծ	Նախագծում «բողոքարկվել» և «բողոք» բառերը զուգորդել համապատասխանաբար «գանագատարկվել» և «գանգատ» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված, 1-ին մաս	Նախագծի 1-ին հոդվածով շարադրվոր հոդվածի վերնագրից առաջ լրացնել «Հոդված 287.» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված, 1-ին մաս	.. Նախագիծը լրացնել 2-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ. «Օրենսգրքի 291-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով. « 2. Սույն օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ բողոքները քննվում են դրանց ստացման օրվանից տասնհինգօրյա	Ընդունվել է	Ընդունվել է

			ժամկետում: »:		
5.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված, 1-ին մաս	Նախագծի 1-ին հոդվածով շարադրվ 287-րդ հոդվածի մասե համարակալումը համապատասխանեցնել «Նորմատ իրավական ակտերի մաին» օրենքի 1 -րդ հոդվածի պահանջներին:	Ընդունվել է	Ընդունվել է
6.	Կառավարություն	Հայաստանի Հանրապետության Վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված դրույթները նախատեսել առանձին հոդվածի տեսքով:	Ընդունվել է	Ընդունվել է